



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 11

Է. ՏԱՐԻ

ՆՈՅՏԵՄԲԵՐ 1951

ՆՈՐ ՄԱՐԴՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՓԱՍԹՈՐ ԼՕՀՄԱՆ

Մարդիկ ամէն փորձ կատարած են իրենց կեանքը օգտակար եւ արդիւնաբեր ընելու: Անոնք Հանաքած են կրօնքի, աշխատանքի, արուեստի, գիտութեան եւ երբեմն ալ վայելքի միջոցաւ հասնիլ բարձրագոյն նպատակին: Սակայն անոնք որ ճշմարտութիւնը դաւանիլ կ'ուզեն, պէտք է խոստովանին եւ խոստովանած են թէ իրենց բոլոր Հանքերուն վախճանը յուսախաբութիւն եղած է:

Անպառնկելի կեանքը ապարդիւն կեանք մըն է: Աշխարհ բոլորովին անանկութեան կը մատնուի երբ անկէ պակասին պտղաբեր անհատները: Մի՛ սպասեր որ քու արտաքին պարագաներդ փոխուին: Ճիշդ գտնուածդ միջավայրին մէջ կրնան քեզմէ օրհնութեան հեղեղներ հոսիլ մահամերձ աշխարհի մը վրայ: Քրիստոս Գեթսեմանիի եւ Գողգոթայի ճաճբուն վրայ կ'ըսէ, «Ես եմ ճշմարիտ որթը եւ ես ձեզի ըսի որ պտուղ բերէք»:

Որթ ըսելով միայն արմատը հասկնալու չէ, այլ ամբողջ որթատունկը, արմատը, ձողունը, տերեւները, ծաղիկը, պտուղը: Յիսուս Ինք է նաեւ հողը եւ արեւը, օդը եւ անձրեւը: Քու գտնուածդ տեղին մէջ եւ ամենէն աննշան սեպածդ դիրքի մը միջոցաւ կրնաս դուն անպատմելի օրհնութիւն մ'ըլլալ: Ի՞նչպէս սակայն:

Անոր զօրութեան գերադանց մեծութեան (Եփես. Ա. 19) մեր մէջ ներգործելովը, Իր փառաւոր զօրու-

թեան համեմատ ամենայն ուժով ուժովցած (Կող. Ա. 11) եւ Սուրբ Հոգիով լեցուելով, Աստուծոյ յաւիտենական Հոգիին գործիքներն ու գործարանը ըլլալով: Անոր Հոգիին զօրութիւնը կ'ստանանք միմիայն անքակտելի կապերով Քրիստոսի հետ կապուած եւ Անոր հետ անլուծելի հաղորդակցութեան մէջ գտնուելով:

Չկայ բան մը որ Քրիստոս այնքան կը դատապարտէ որքան անպառնկելի կեանք մը: Ի՞նչ է քու ազդեցութիւնդ շուրջդ գտնուողներուն վրայ: Մեզմէ ելած ազդեցութիւնը մեր էութեան արդիւնքն է: Մենք ինչ որ եղած ենք, անոր համեմատ ազդեցութիւն կը թողունք: Ռուսիոյ վանքերէն մէկուն մէջ վանական մը կ'ապրէր որ բոլորովին անդամալոյժ եղած էր եւ երեւութապէս բեռ մը ուրիշներու վրայ: Սակայն անոր կեանքէն ազդեցութիւն մը կ'ելլէր որ բոլոր իրենց այցելողներուն սփոփման եւ ազնուացման կը ծառայէր: Ամբողջ վանքը փոխուեցաւ անոր ձգած ազդեցութեանէն: Հազարաւորներուն օրհնութեան պատճառ եղաւ: Անոր թողած ազդեցութիւնը անոր ներքին կեանքին կատարելագործման արտայայտութիւնն էր: Կան բաներ զոր մենք կրնանք չեղեալ ընել, սակայն երբեք չենք կրնար ետ առնել ազդեցութիւն մը զոր մէջ մը թողած ենք: Մեզի համար ամենէն կենսական կէտն է որ ազդեցութիւն թողունք, սակայն մեր ազդեցութիւնները թողելու ենք միմիայն իբրեւ ճիւղեր հաս-

տատուած Գրիստոս որթին վրայ:

Ըսինք թէ մեր ներքին կեանքին դէպի կատարելագործութիւն յառաջանալով միայն կարելի է մեզի Գրիստոսի ուզածին նման պտուղ բերել: Նոր զօրութեան մը մեր մէջ ներգործելովը միայն կրնան մեր կեանքերը նորոգուիլ: Մենք ամէնքս ալ մեր կեանքերուն մէջ տաշուելիք բաներ ունինք: Ու եթէ տեղի չտանք որ Աստուծոյ զօրութիւնով տաշեն եւ յղկեն մեր կեանքերը՝ մենք խեղանդամ կը մնանք: Բնաշըմամբ չէ որ պիտի փոխուին մեր կեանքերը, այլ վերաբուժական գործողութեամբ: Լըձօրէն պատրաստ ենք Անոր դասակին տակ երթալու: Այս կարգի լուրջ խնդիրներու հետ չենք կրնար խաղալ: Անվերապահօրէն յանձնուելու ենք որ Ինք հերկէ մեր սիրտերը ու հոն բացած խորունկ ակօսներուն մէջ ցանէ Իր սուրբ սերմը եւ լեցնէ մեզ Իր Սուրբ Հոգիովը:

Սակայն անդադար պտուղ բերելու համար՝ շարունակ անընդհատ հաղորդակցութեան մէջ գտնուելու ենք Գրիստոսի հետ: Ամէն ինչ կախում ունի մեր Քրիստոսի հետ ունեցած հաղորդակցութենէն: Անոր հետ անձնական, կենդանի եւ անընդհատ հաղորդակցութիւն մշակելով միայն կրնանք մենք վերակենդանանալ եւ վերակենդանացնել ուրիշները:

«Եւ ամէնը որ պտուղ կը բերէ, կը մաքրէ զանիկա, որպէսզի ալ աւելի պտուղ բերէ»: Եթէ Գողգոթայի վրայ ծնած Աստուծոյ զաւակ մըն ես, պատրաստ եղիր Անոր հարուածները ընդունելու, որպէսզի դուն ալ Անոր Միածնին նման քու կեանքիդ մէջ պտուղ տեսնելով՝ հոգիդ կշտանայ:

ԿԵՆԴԱՆԻ ԹՈՒՂԹԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

Պօղոս Առաքեալ կ'ըսէ թէ քրիստոնեաները կենդանի թուղթեր են ճանչցուած ու կարգացո-ւած ամէն մարդոցմէ: Մարդիկ ի՞նչ կը կարդան մեր մէջ: Մեր մէջ զԱստուած կը տեսնեն, Աստուած, որ սէր է:

Հ. Մ. Սթանլի, նշանաւոր բնախոյզը կ'ըսէ, «Երբ ես 1871ին Ափրիկէ գացի Լիվինկսթընը գտնելու, նախապաշարուած անոր դէմ՝ այն առանձնակեաց ծերունին տեսնելով ես ինծի հարցուցի թէ արդեօք ի՞նչ էր անոր ներշնչման աղբիւրը: Եւ ակնատես ըլլալով անոր բարեպաշտութեան, քաղցրութեան, եռանդին եւ լրջութեան, անոր միջոցաւ դարձի եկայ, թէպէտ եւ անիկա որեւէ աշխատանք թափած չէր զիս՝ դարձի բերելու»:

Դաւիթ Լիվինկսթըն չէր վիճաբաներ ճշմարտութեան համար՝ ալ զայն կ'ապրէր: Կեանքը միշտ աւելի ճարտասանօրէն կը խօսի քան շրթունքը:

Անհաւատ մը, անաստուածութեան դէմ կարգ մը բանախօսութիւններ լսելէ վերջ բանախօսին ներկայացաւ եւ անոր եկեղեցիին անդամակցելու փափաք

յայտնեց: Բանախօսը ուրախանալով իր այդ ակներև յաջողութեան վրայ՝ հարցուց թէ իր պատճառաբանութիւններէն ո՞ր մէկը ամենէն համոզիչ գտած էր: Անիկա պատասխանեց, «Քու պատճառաբանութիւններէդ ոչ մէկը ինծի դպաւ: Սակայն իրիկուն մը երբ ծեր կոյր կին մը խարխափելով նստելու տեղ մը կը փնտռէր, զայն նստարանի մը առաջնորդեցի: Տիկինը իր շնորհակալութիւնը յայտնելէ վերջ պայծառ երեսը ինծի դարձնելով հարցուց, «Դուն կը սիրե՞ս իմ օրհնեալ Փրկիչս»: Անոր խոր գոհունակութեան ակնարկը եւ յաղթական շեշտը ինծի զգացուցին թէ Այն որ կարող էր այսքան անօգնական անհատ մը այնքան ուրախ եւ զուարթ ընել, յիշաւ օրհնեալ Փրկիչ մ'ըլլալու էր:

Աշխարհ այսօր ոչ աւելի քարոզներու, ոչ աւելի քարոզիչներու, ոչ աւելի պաշտամունքներու եւ ոչ ալ աւելի պատճառաբանութիւններու կը կարօտի, այլ անիկա կը փափաքի քու եւ իմ մէջս Գրիստոսը տեսնել:

Տր. Հըտտըն երբ օր մը լսեց թէ լրագիրներէն մին զինքը «Նոր Առաքեալ» մը կոչած էր, գոչեց, «Ես չեմ ուզեր առաքեալներուն նմանիլ, ես կ'ուզեմ Քրիստոսի նման ըլլալ: Դուն պիտի բաւականանայի՞ր Պետրոսի կամ Յովհաննէսի նման ըլլալով:

Ի՞նչպէս կրնանք Գրիստոսի նման ըլլալ: Հայելի մը ի՞նչպէս կը ցուցնէ անձի մը կամ առարկայի մը նմանութիւնը: Չանոնք իր մէջ առնելով եւ յետոյ ցոլացնելով: Մենք ալ Յիսուսի պատկերը մեր սննդէն ցոլացնելու համար նախ դիտելու ենք Անոր փառքը, նայելու ենք Անոր դէմքին եւ մեր ակնարկը անդադար սեւեռելու Անոր վրայ: Կենդանի հայելիներ ըլլալու ենք որ Անոր առջեւ կենալով զԱյն պատկերացնենք: Սակայն մենք, կենդանի հայելիներս, ոչ թէ միայն Գրիստոսի առջեւ կենալու ենք՝ այլ նաեւ միշտ յղկուած եւ մաքուր ըլլալու ենք որպէսզի կարենանք յստակօրէն ցուցնել Անոր նմանութիւնը:

Գրիստոնեան տարբերելու է ուրիշ մարդոցմէ: Անոր ընտանեկան յարկին տակ, գործատեղիին մէջ եւ զբօսանքի վայրը տարբերութիւն մը նշմարուելու է:

«Տէրը քու ելլելդ ու մտնելդ պիտի պահպանէ ասկէ ետեւ մինչեւ յաւիտեան»: Սաղ. ՃԻԱ. 8:

Անդադար Գրիստոսի համար վկայելու ամենադժուար տեղը ընտանեկան յարկն է: Սակայն Տէրը չկըրնար արդիւնաբեր ընել մեր «Ելլելը», եթէ մեր «Մտնելուն» մէջ թերանանք Անոր առջեւ: Արդեօք ինչո՞ւ յաճախ դժուար է քրիստոնեաներու հետ գործել: Արդեօք ինչո՞ւ անոնք այնքան շուտ կ'առնուին: Յաճախ կը լսենք, «Այսինչը սուրբ մըն է բայց մագիլներ ունի»: «Այսինչը շատ լաւ մարդ մըն է, սակայն կրնայ նաեւ դաժան ըլլալ»: Դժնադատեղը շատ դիւրին է: Չգուշանանք մեր անձերուն, քանզի եթէ այնքան հաճելի եւ սուրբ մարդիկ երբեմն կը դժուարացնեն ու-

րիշներու կեանքը, որչափ աւելի ձեզի եւ ինծի նման մարդիկ կրնան սիրոյ հակառակ արտայայտուիլ: Ինքզինքնիս Տէր Յիսուսի յանձնելու չե՞նք որ մեր մէջէն բնաշինջ ընէ անհամբերութեան եւ դիւրագրգռութեան ամէն հետք: Մեր տուններուն մէջ երեւնալու չե՞ա՞յն խոնարհ եւ սիրող հոգին, որ բոլոր միւսները իրմէ բարձր կը համարէ: Պէտք չէ՞ որ տան անդամներուն ալ ցուցնենք այն քաղաքավարութիւնն ու փափկանկատութիւնը զոր օտարներու հանդէպ ցոյց կուտանք:

Աստուած խոստացած է մեզի նաեւ օգնական ըլլալ մեր «ելլելու» միջոցին:

«Անկարելի է առուտուրի մէջ քրիստոնէական կեանք ապրիլ», կ'ըսէր մէկը անցեալ օր: «Ինչո՞ւ», հարցուցի: «Իմ գործատէրս եկեղեցի յաճախող մէկն է, սակայն մեզմէ կ'ականկալէ որ մեր յաճախորդները խաբենք» պատասխանեց ան:

Երկու քրիստոնեաներ գործի մը մասին կը խօսէին: Անոնցմէ մէկը իր լեզուին զգուշութիւն չըրաւ եւ երբ միւսը հարցուց թէ քրիստոնեայ մը այդ կերպ խօսելո՞ւ էր, անիկա պատասխանեց, «Ես իբրեւ քրիստոնեայ չեմ խօսիր հիմա, այլ իբրեւ մարդ»:

Քրիստոնեան անշուշտ ունենալու է իր զբօսանքի պահերը, սակայն անոր զբօսանքն ալ տարբերելու է աշխարհային մարդոց զբօսանքներէն:

Կարգ մը քրիստոնեաներ թատրոն կը յաճախեն ինքզինքնին արդարացնելով թէ բարոյապէս բարձր աստիճանի վրայ գտնուող խաղերու միայն ահանատեա կ'ըլլան: Արդեօք այսպիսիները վստահ են որ իրենց օրինակը չվնասեր աւելի անփորձ եւ տկար քրիստոնեաներու: Վստահ են թէ իրենց տեսած խաղերը բոլորովին անվնաս են իրենց հոգիներուն ինչպէս նաեւ դերասաններուն հոգեւոր կեանքին:

Ուրիշ զբօսանք մըն է պարը: Իրաւ Սուրբ Գիրքին մէջ պարողներու կը հանդիպինք, սակայն հոն յիշուած պարերուն մէջ այրեր եւ կիներ միասին չեն պարեր: Ներկայ պարերուն նկատմամբ կ'ստիպուինք հարցնել թէ արդեօք անոնք խոհուն եւ համեստ անհատներու վայել են, կամ Աստուծոյ փառքը փնտռողներու յարմար:

Երիտասարդուհի մը դարձի գալու պահուն հարցուց թէ այլեւս պարելէ հրաժարելո՞ւ էր: Իրեն պատասխանուեցաւ թէ արդեօք երթալո՞ւ էր պարի մը ուր կարող պիտի չըլլար վկայել իր Փրկչին համար: Երիտասարդուհին գնաց պարի, սակայն պարելու միջոցին հարցուց իր ընկերոջը թէ արդեօք քրիստոնեայ էր: Երիտասարդը վերջին ծայր զարմացած՝ «Ոչ», պատասխանեց: Յետոյ նոյն հարցումը երիտասարդուհին ուղղելով հարցուց, «Իսկ դու՞ն», «Այո», ըսաւ օրիորդը: «Ուրեմն հոս ի՞նչ գործ ունիս, եղաւ երիտասարդին հարցումը»: Աւելորդ է ըսել թէ երիտասարդուհին ալ չպարեց:

Զմոռնանք երբեք թէ մենք մերինը չենք: «Ձեր

մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջ է»:

Մենք հեռու մնալու ենք որեւէ բանէ որ կը վնասէ Քրիստոսի գործին, կ'աղօտացնէ մեր հոգեւոր տեսութիւնը, Սուրբ Գիրք կարդալու եւ աղօթելու սէրը մեզմէ կը խլէ ու կը քանդէ կամ կ'արգիլէ մեր հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ:

ԱՆԾԱՆՕԹ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Բնիկ Զմիւռնիացի, ծնած եմ առաքելական եկեղեցիին մէջ: Հազիւ 13 տարեկան էի, իմ հայրս ձգելով իր ծննդավայրը, դէպի Մակեդոնիա գաղթեց: Դավալա ըսուած քաղաքին մէջ 13 տարի մնացինք: Այն ժամանակ ես, կայտառ պատանի մը, դերձակութիւն սորվիլ սկըսայ իբր ապագայի արհեստ, եւ ետքը ստիպուեցայ ծըխախտի գործարան երթալ: Ժամանակ մը հոն գործեցի: Իմ կեանքս սովորական եւ բարոյական կեանք մըն էր զոր իմ ծնողքէս ընդունած էի որպէս իրենց քրիստոնէական գաղափարական կրթութեան արդիւնք, բայց այն զարմանալի փորձառական քրիստոնէական կեանքէն լուր չունէի:

Մօրս հետ միասին Ամերիկա եկանք, 1912 թուականին: Արհեստով դերձակ ըլլալով քիչ ատենուան մէջ յաջողեցայ խանութ մը բանալ: Հազիւ տարիուկէս շարունակեցի, օր մը հայ բարեկամ մը խանութ եկաւ ձեռքը տոմսակ մը բռնած Ամերիկեան եկեղեցիի մը հացկերոյթին համար ծախելու: Զինքը չմեղծելով հատ մը գնեցի: Այն իրիկուն յիշեալ եկեղեցին գացի: Երեցական եկեղեցի մըն էր: Լաւ ընդունելութիւն գտայ հոն բարոյապէս զիս շատ գոհ ձգեցին: Ասկէ վերջ սկսայ այդ եկեղեցին շարունակել ամէն կիրակի առաւօտ եւ երեկոյ եւ անդամ գրուեցայ այդ եկեղեցիին, այդպէս շարունակեցի ժամանակ մը շարունակ աղօթելով եւ Սուրբ Գիրք կարդալով: Բայց ափսո՛ս, շատ ափսոս որ այդ եկեղեցին իմ փրկութեանս մասին բառ մը իսկ չխօսեցաւ: Օր մը ինքնիրենս գալով Անառակ Որդիին պէս խորհիլ սկսայ. ահա հոգիս անօթութենէ կը տառապի, իմ հօրս տունը երթամ ապաշխարեմ, ինծի սնունդ տըւող մը չկայ. բայց չէի գիտեր թէ ինչպէս պէտք է դարձի գալ: Երկու երեք անգամ փորձեցի, չկրցայ յաջողիլ: Մի քանի քրիստոնեայ Ամերիկացի եղբայրներ խօսեցան ինծի այս մասին, սակայն միտքս այնչափ բխցած էր որ չէի կրնար հասկնալ: Այսպէս երկու երեք անգամ Ս. Հոգին մերժեցի: Առտու մը խափնուի գացի 1913ին, ինչ տեսնեմ, խանութը պարպըւած: Բոլորովին կողոպտուած էր: Ամբողջ հազուստեւոր տարուած էին: Այն վայրկեանին ծուկի վրայ գալով

աղօթեցի, «Ո՛վ Աստուած իմ, ահա զիս Գու ձեռքերուդ մէջ կը յանձնեմ. ներէ ինծի որ շատ անգամ Բեզ մերժեցի»: Աղօթքս լինցուցածիս պէս նոր կեանքնոր հոգի մը ստացայ, Պօղոս առաքեալի պէս հոգևոր աչքերս բացուեցան, նոր կեանք մը սկսաւ իմ սրտիս մէջը: Անկէ ի վեր չէի կրնար միշտ իմ վկայութիւնս չտալ եւ զԱստուած չփառաւորել իր այս մեծ շնորհքին համար: Միեւնոյն ժամանակ տուններ եւ հիւանդանոցներ կ'այցելէի զխոցածներուս եւ չգիտցածներուս Աստուծոյ խօսքը խօսելով եւ զիրենք փրկութեան հրաւիրելով: Աստուծոյ օգնութեամբ եւ Ս. Հոգւոյն շնորհքով կը շարունակեմ այս կեանքը: Հիմա կը պատկանիմ Նիւ Եօրքի հոգևոր եղբայրութեան որ այն ատեն հինգ հոգիով սկսած էր:

Նիւ Եօրք

ՊԵՏՐՈՍ ՍԱՐԱՅԵԱՆ

ՕՐՀՆԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

ԿԸ ԶՕՐԱՅՆԷ

Ամէն բանի կարող եմ Անով՝ որ զիս զօրացուց:

Փիլպ. Դ. 13

Սքանչելի՛ խօսք մ'է որ երբեք մարդու մը տըրուած ըլլայ արտաբերել, «Ամէն բանի կարող եմ»: Առաջին լականարկով կ'ենթադրենք որ խօսողը կամ շատ քիչ բանի փորձառութիւն ունեցած էր աշխարհէն ու անոր բոլոր յարափոփոխ պայմաններէն եւ կամ թէ ան բախտին մէկ առանձնաշնորհեալ զաւակն էր, որ երբեք չէր գիտակցած կարօտութեան, իր տրամադրութեան տակ ունենալով ուժի եւ պերճանքի առատ պաշար մը:

Բայց ուշադիր խորհրդածութեամբ այս երկու ենթադրութիւններն ալ կ'անհետին: Ինքզինքնիս ղէմ առ ղէմ կը գտնենք Հոովմայեցի գինուորի մը, կապուած բանտարկեալի մը: Նա մարդկային փորձառութեան ընթացքին բոլոր աստիճանները վայլած, մերթ հասած էր անոր ճոխ լեցունութեան, եւ ապա իջած նուաստացուցիչ կարօտութեան, եւ անձամբ կրնար ըսել, «Գիտեմ չքաւորութիւն քաշելը, գիտեմ շատը ունենալը, ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ, թէ՛ կշտանալը, թէ՛ անօթեանալը, թէ՛ շատ ունենալը եւ թէ՛ պակասութիւն քաշելը»: Հետեւաբար մարդկային կեանքին ծայրագոյն կէտերուն, եւ այս երկուքին մէջ ինկած բոլոր տարբերութիւններուն խորունկ փորձառութիւններէն անցնելէ յետոյ միայն է որ առաքեալը կ'ըսէ այն վստահ խօսքը, «Ամէն բանի կարող եմ»:

Մտքի այս տրամադրութիւնը իսկապէս նախանձելի է: Ամէն կարօտութենէ գերիվեր ըլլալ, յաջողութիւնն ու բարգաւաճումը առանց հպարտանալու

վայելել, ձախորդութիւնները առանց տրտունջի կրել, զգալ թէ ո՛չ մէկ երկրաւոր պարագայ կրնայ հոգւոյն՝ Աստուծոյ մէջ ունեցած հաւասարակշռութիւնը խոտկել, կարողանալ է՛ն անընտել, աննուաճ դժուարութիւնները լծել հոգևոր յառաջդիմութեան կառքին: Դարձեալ, այնպէս մը ըմբռնել զօրութեան իմաստը, կարողանալ խնդալ անկարելիութեան վրայ ու երգել հաւածանաց պահուն, տկարին օգնել, թէպէտ ըստ երեւոյթի մենք անձամբ կարօտ ըլլալ թուինք: Կեանքի յարափոփոխ պայմաններուն միջեւ ինքզինքնիս զգալ ջլապինդ լողորդ մը որ ովկեանին ալեաց մէջ նետուած՝ ետ կը մղէ ջուրերը իր ուժին հպարտ գիտակցութեանը մէջ. ահա այս բոլորը եւ զեռ աւելին ալ պարփակուած է այս արտայայտութեան մէջ:

«Ամէն բանի կարող եմ»:

Այս խնդրոյն գլխաւոր խորհուրդը սա է, թէ այն զօրութիւնը որուն մենք կը տենչանք, մեզի չտրուիր մէկ անգամէն խտացեալ կոյտի մը նման, որմէ կարելի է քաշել ըստ քմաց, ինչպէս ելեքտրական ուժը որ մասնաւոր արկղներու մէջ միջերուած է զործածութեան համար: Այս, կեանք մըն է եւ ձեռք կը բերուի միայն՝ երբոր մենք կենդանի միութեան մէջ ենք: Անոր անձին հետ: Առանց իրեն բան մը չենք կրնար ընել: Ուստի մեր կեանքին գլխաւոր նպատակը ըլլալու է Քրիստոսի հետ կենդանի եւ սերտ յարաբերութեան մէջ մնալ, զգուշանալով ամէն բանէ որ կրնայ ընդմիջել զայն, եւ գործածելով ամէն միջոց որ կը հաստատէ եւ կը լայնցնէ զայն: Եւ պիտի տեսնենք որ ճիշդ մեր այս ըրածին համեմատութեամբ իր ուժը մեր մէջ պիտի հասնի ամէն կարելի պատահականութեանց հետ: Կրնանք միշտ չզգալ Անոր ներկայութիւնը, բայց զայն միշտ ներկայ պիտի գտնենք երբ սկսինք իւրացնել եւ գործածել զայն: Ու եթէ սովորականէն աւելի կը գիտակցինք մեր տըրկարութեան, բոպէական ղէպի վեր ականարկ մը բաւական պիտի ըլլայ լեցունութեան մակընթացութիւնովը զայն բերելու մեր սրտերուն մէջ:

Փորձութիւն մը չկայ որուն չկարողանանք տիրել, չկայ զրկանք մը զոր կարելի չըլլայ համբերութեամբ կրել, ո՛չ մէկ դժուարութիւն որուն հետ չկարենանք մրցիլ, ո՛չ մէկ գործ զոր կարելի չըլլայ կատարել, ո՛չ ալ խոստովանութիւն մը կամ վկայութիւն մը զոր չկարենանք ընել, եթէ միայն մեր հոգիները Յիսուս Քրիստոսի հետ առողջ միութեան մէջ կ'ապրին: Զի ինչպէս է մեր օրը, մեր ժամը, այնպէս ալ պիտի ըլլայ մեր ուժը: Եւ այս այնքան իրական որ բոլորովին պիտի զարմանանք մեր վրայ, մինչ կը տեսնենք այն բանը, զոր ի կայտար հանեցինք:

Կանգ առ այդ ներկայ ժամանակին վրայ «Կը գօրացնէ»: Ժամէ ժամ, ինչպէս արեւին ջերմութեան ալիքները կը ծծուն ծաղիկներէն եւ հսկայ ծառերէն, նոյնպէս ալ սիրագեղ Փրկչին զօրութիւնը պի-